

Տեղահանուած եւ անպատմելի տառապանքով Պարսկաստան հասած ժողովրդեան զրութիւնը շատ ծանր էր: Ժամանակակից մը, Սպահանի Աւգոստինեան Կարգէն միաւրան մը, այսպէս կը նկարագրէ Սպահանի Հայոց կացութիւնը առ Նորին Սրբութիւն Պօղոս Ե. գրած հետեւեալ նամակին մէջ, որ թէեւ թուական չունի, բայց գրուած ըլլալու է 1607 Յունիս 27ին^{4*}.

Սրբազան Հայր.

Archivio Vaticano, Fondo Borghese, ser. II,
Nr. 67, c. 141.

Մեծ Հայաստանի Երեւան քաղաքի Դաւիթ կաթողիկոսը (patriarcha), որ միւս բոլոր կաթողիկոսներու գլուխն է, Պարսից թաւաւորէն, երբ անիկա Երեւանի երկիրը գրաւեց պատերազմով, հրաման ընդունեցաւ, որ բոլոր քրիստոնեայ հայերուն հետ ի միասին Սպահան երթայ եւ հոն Սպահանի մերձակայ երկու փոքր վայրերու մէջ բնակի: Հոն Հայոց համար երեք եկեղեցի շինել տուաւ թաղաւորը, որպէս զի անոնք կարենան իրենց աստուածային պաշտպամունքը կատարել:

^{4*} Նամակին չորրորդ էջին վրայ կ'ըսուի թէ «սուղարկուած է Սպահանէն Յունիս 27ին», բայց տարին չէ նշանակուած: Հաւանորէն 1608էն յառաջ գրուած է. Ֆր. Աւգոստինոս Փորթուկալցի իւր 1608 Փետր. 8ին տուած տեղեկագրի մէջ կը խօսի Պարսկաստանցի Հայոց կրած աղէտի մասին եւ կ'աւելցնէ թէ անոնք իրենց դէպը կը յուսան գտնել Չեր Սրբութենէն»: Ինչպէս քիչ յետոյ պիտի տեսնենք, Դաւիթ կաթողիկոս 1607, Մայիս 13ին գրեց առ Պաւղոս Ե. թուղթ մը: